ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 68

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 18 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի, Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2018 թվականի նոյեմբերի 23-ի N 18 հերթական նիստի օրակարգը.

1.Համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 19-ի N 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Նոր Գեղի համայնքի հարկատուների համար գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություններ սահմանելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները,պահանջները և պայմանները սահմանելու մասին

4.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ հողատեսքը անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրելու մասին

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (6)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան		
Անահիտ Առաքելյան		
Վլադիկ Գրիգորյան		
Մարիա Մկրտչյան		
Շիրազի Մամոյան		
Նաթելա Շմավոնյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք, Ֆրունզիկ Թնոյանի 64, 093335600, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 69-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 19-ի <<Նոր Գեղի համայնքի 2018թվականի բյուջեի հաստատման մասին>> N 94-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից:

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վլադիկ Գրիգորյան
Մարիա Մկրտչյան
Շիրալի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Նոր Գեղի համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 23-ի N69-Ն որոշման

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

Հ/Հ	Բյուջետային ծախսը				Հաստատված գումար	ավելացում/+/ պակասեցում/-/	գումարը վերաբաշխումից հետո
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	Ծածկագիրը	Անվանումը	Հոդվածը			
1	Պահուստային ֆոնդ	11.1.2.51	Պահուստային ֆոնդ	4891	5650000	-3930000	1720000
2	Օրենսդիր գործադիր մարմին	1.1.1.51	գրասենյակային պիտույքներ	4261	300000	200000	500000
3	Օրենսդիր գործադիր մարմին	1.1.1.51	Համակարգչային ծառայություններ	4232	240000	30000	270000
4	Աղբահանություն	5.1.1.51	Ընթացիկ դրամաշնորհ	4637	12000000	2200000	14200000
5	Աղբահանություն	5.1.1.51	Շենքերի և շինությունների շինարարություն	5112	500000	-500000	0
6	Արվեստի դպրոց	9.5.1.51	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	640000	-440000	200000
7	Փողոցների լուսավորություն	6.4.1.51	Էներգետիկ ծառայություն	4212	4800000	500000	5300000
8	Փողոցների լուսավորություն	6.4.1.51	Շենքերի և շինությունների շինարարություն	5112	0	250000	250000
9	Սոցիալական հատուկ արտոնություն	10.7.1.51	այլ նպաստներ բյուջեից	4729	8300000	1000000	9300000
10	Նախադպրոցական կրթություն	9.1.1.51	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	5091608	1000000	6091608
11	Նախադպրոցական կրթություն	9.1.1.51	վարչական ծառայություններ	5122	2893000	-210000	2683000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 70

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի,<<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի նախաձեռնությունը համայնքի ավագանին որոշում է .

1.Սահմանել արտոնություն՝ ժամկետանց գույժերի վրա 50% չափով այն հարկատուներին,ովքեր մինչև 2018թվականի դեկտեմբերի 20-ը կվճարեն գույքահարկը, հողի հարկը և դրանց հետ մեկտեղ գույժերի մնացած մասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (6)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան		
Անահիտ Առաքելյան		
Վլադիկ Գրիգորյան		
Մարիա Մկրտչյան		
Շիրազի Մամոյան		
Նաթելա Շմավոնյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 71-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ /ՀՐԱԺԵՇՏԻ/ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ,ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 35-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները,պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրվանից:

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ (0)

Սամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վլադիկ Գրիգորյան
Մարիա Մկրտչյան
Շիրազի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված

Նոր Գեղի համայնքի ավագանու

2018թվականի սեպտեմբերի 23-ի N 27-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ /ՀՐԱԺԵՇՏԻ/ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույնով սահմանվում են Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետև քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները,պահանջները և պայմանները:

2.Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Նոր Գեղի համայնքի ղեկավարը՝ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա,եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին,պահանջներին և պայմաններին:

3.Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

II.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից,հասարակություններից,հյուրանոցներից,բազմաբնակարան շենքերից,պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից,զբոսայգիներից,պուրակներից,հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից,հանրային սենդի օբյեկտներից նվազագույնը 100 մ, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 30 մ հեռավորության վրա բացառությամբ,եթե դրանք գտնվելու են՝

ա) գերեզմանատներին կից՝գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50 մ հեռավորության վրա,

բ) միայն անհատական բնակելի տներից և (կամ) հանրային սենդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

5.Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. նախասրահ՝ հանդերձարանով,

բ.հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

գ.շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ.սանհանգույց (առնվազն 2 հատ,որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար),

ե.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,

զ.հուղարկավորությունը սպասնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք,

2)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար,

3)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք,նախասրահ,սանհանգույցներ,

4)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահով զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը՝ ներառյալ սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված տարածքը պետք է ունենա առնվազն երկու մետր բարձրությամբ անթափանց նյութերով կառուցված ցանկապատ կամ պարիսպ:

Ընդ որում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայությունները իրականացվում և (կամ) մատուցվում են միայն սրահի ցանկապատված տարածքում այնպես,որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները,այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

5)Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ,ընդ որում ցուցանակները պետք է լինեն լուսավորված:

6)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյուր հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

7)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քառ.մետր մակերեսով տարածք՝քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

9)քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պետք է ունենա բժշկի որակավորում ունեցող աշխատակից կամ համապատասխան պայմանագիր գործող բժշկական հաստատությունների հետ՝քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ողջ ժամանակահատվածում բժշկի ներկայությունը ապահովելու համար՝անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով,

10)քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

6.Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև **հոգևորականի համար նախատեսված սենյակ,** ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և **սգո պարագաների վաճառքի սրահ, որի** ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրունզիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2018 թվականի N 72

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ

ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 75-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Համայնքի վարչական տարածքի համայնքային սեփականություն հանդիսացող 07-048-0447-0003 ծածկագրով գյուղատնտեսական այլ հողատեսք՝ 2.05983 հա անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ ԱԻՆ <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ին:

կողմ (6)	դեմ (0)	ձեռնպահ (0)

Մամվել Ալեքսանյան
Անահիտ Առաքելյան
Վլադիկ Գրիգորյան
Մարիա Մկրտչյան
Շիրազի Մամոյան
Նաթելա Շմավոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ